ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 9627

« 05 » դեկտեմբերի 2024թ.

ԷԴՄՈՆԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԵԻ Ա/Ձ-ԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային, տնտեսական և գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ի գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական,
- դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ին փոխկապակցված անձանց բավարարելու մասին հավաստումը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **դեկտեմբերի 06-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/32» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դաղիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-777